# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**20 սեպտեմբերի 2019թ.**

**ք. Սիսիան**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99-րդ հոդվածների պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2019 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N364-Ա հրամանի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2019 թվականի մայիսի 14-ի N51-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ 2019 թվականի սեպտեմբերի 03-20-ն ընկած ժամանակահատվածում իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն (այսուհետ՝ հսկողություն) հետևյալ 17 բնագավառներում՝

<u>Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, առևտուր և ծառայություններ, սոցիալական պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն, կրթություն, տրանսպորտ և կապ, պաշտպանություն, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, բնապահպանություն, անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն, ոստիկանություն, քաղաքացիական կացության ակտերի գրանցում:</u>

1. Հիմք ընդունելով վերոնշյալ 17 բնագավառների մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության՝ 2019 թվականի սեպտեմբերի 3-20-ն ընկած ժամանակահատվածում կազմված N1/1 և N1/2, N2, N3, N4, N5, N6, N7, N8, N9, N10, N11, N12, N13, N14, N15, N16, N17 արձանագրությունները, իրավական և մասնագիտական հսկողության ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, այդ խախտումների վերացման ուղղությամբ արված առաջարկությունների և ժամկետների վերաբերյալ:
2. Խախտումները նշված ժամկետներում չվերացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները կամ անգործությունը կբողոքարկվեն դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Սիսիան համայնքի ղեկավարը իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:
4. Սույն արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Սիսիան համայնքի ղեկավարին:

**Հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝**

**Ս.Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավար՝**

Ա. Սարգսյան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքում
իրականացված իրավական և
մասնագիտական հսկողության
արդյունքների ամփոփման վերաբերյալ 2019
թվականի սեպտեմբերի 20-ի
արձանագրության

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Սույն հավելվածում նշված խախտված դրույթների վերաբերյալ տեղեկատվության հիմքն են հսկողության 17 բնագավառների (տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, առևտուր և ծառայություններ, պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, տրանսպորտ և կապ, անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն, բնապահպանություն, ոստիկանություն, քաղաքացիական կացության ակտերի գրանցում) մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության N1/1, N1/2, N2-N17 արձանագրությունները:

(Հսկողության ժամանակահատվածը՝ 2017 թվականի նոյեմբերի 5-ից՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների օրից մինչև 2019 թվականի սեպտեմբերի 20-ը: Այն բնագավառները, որոնցում խախտումներ չեն արձանագրված, ներքոհիշյալ աղյուսակում չեն նշվում:)

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| **Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում** | | | |
| 1.19. Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | Թերի է պահպանված | Համայնքը խոշորացումից հետո դեռևս չունի համայնքի ողջ տարածքի և նրա մեջ մտնող բնակավայրերի համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: | Առաջարկվում է միջոցներ ձեռնարկել անհրաժեշտ քաղաքաշինական փաստաթղթերը ձեռք բերելու ուղղությամբ: |
| 1.20. Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | Թերի է պահպանված | Համայնքի իրավանախորդ Սիսիան քաղաքային համայնքն ունի քաղաքաշինական կանոնադրություն, որը հաստատվել է ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N62-Ա որոշմամբ, սակայն համայնքի ամբողջ վարչական տարածքի համար քաղաքաշինական կանոնադրություն չկա: | Առաջարկվում է միջոցներ ձեռնարկել ամբողջ համայնքի ողջ տարածքի բնակավայրերի համար կանոնադրություն հաստատելու ուղղությամբ: |
| 1.27. Համայնքի ավագանու նիստերի օրակարգի ձևավորման գործընթացում ՏԻՄ օրենքի պահանջների պահպանման առկայություն: | Թերի է պահպանված | Ստուգվող ժամանակահատվածում պահպանվել են համայնքի ավագանու նիստերի օրակարգի ձևավորմանը ներկայացվող պահանջները, բացառությամբ այն բանի, որ նախագծերի քննարկման մասին ավագանու մշտական հանձնաժողովների նիստերի արձանագրություններ չկան: | Առաջարկվում է այսուհետ բացառել նմանատիպ թերությունները: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 1.30. Համայնքի ավագանու անդամի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով որևէ մշտական հանձնաժողովի անդամակցությունը և դրա նիստերին մասնակցությունը: | Թերի է պահպանված | Համայնքի ավագանին իր 2017-11-21 N7-Ա որոշմամբ ստեղծել է 3 մշտական հանձնաժողով՝ 1-ին՝ կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության և բնության պահպանության հարցերի (կազմը՝ 5 հոգի), 2-րդ՝ ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի (կազմը՝ 5 հոգի), 3-րդ՝ իրավական և ենթակառուցվածքներին առնչվող հարցերի ու արտաքին կապերի (կազմը՝ 5 հոգի) մշտական հանձնաժողովներ, սակայն հանձնաժողովների նիստերի անցկացման մասին արձանագրություններ չկան: | Առաջարկվում է սույն իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները, ինչպես նաև սույն դրույթը քննարկել համայնքի ավագանու առաջիկա նիստում, այսուհետ սահմանված կարգով գումարել նաև հանձնաժողովների նիստեր և կազմել համապատասխան արձանագրություններ: |
| 2.12. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմելուց և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանը համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) ներկայացված լինելը: | Թերի է պահպանված | Խոշորացված համայնքի համար դեռևս նմանատիպ գործառույթներ չեն իրականացվել: | Առաջարկվում է միջոցներ ձեռնարկել համայնքի ողջ տարածքի համար համապատասխան փաստաթղթեր կազմելու ուղղությամբ: |
| 2.13. Համայնքի ղեկավարի որոշման առկայություն՝ համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ: | Թերի է պահպանված | Խոշորացված համայնքի համար դեռևս նմանատիպ գործառույթներ չեն իրականացվել: | Առաջարկվում է միջոցներ ձեռնարկել համայնքի ողջ տարածքի համար համապատասխան փաստաթղթեր կազմելու ուղղությամբ: |
| **Քաղաքաշինություն** | | | |
| 6.01. Համաձայնեցված ճարտարապետաշինարարական նախագծերը համապատասխանում են ՃՀԱ-ում նշված դրույթներին և ՀՀ օրենսդրությամբ ճարտշին. նախագծերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին | Թերի է պահպանված | Համայնքի կողմից տրված ՃՀԱ N 32 27.09.2018թ, ՃՀԱ N 47 12.06.2019թ մասով մշակված և համաձայնեցված նախագծերում բացակայում է շինարարության տևողության նորմատիվային գրաֆիկները, խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 111-112-րդ կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 111-112-րդ կետի պահանջները |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ ստուգման ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 6.08. ՀՀ օրենսդրությամբ սահմանված 3-օրյա ժամկետում թույլտվության պատճենները ներկայացվում են ՀՀ ՔՆ քաղաքաշինական պետական տեսչություն և ՀՀ ԿԱ հարկային ծառայության համապատասխան տարածքային տեսչություն | Թերի է պահպանված | շին. թույլ N 2 12.02.2018թ շին. թույլ N 14 31.07.2018թ շին. թույլ N 27,23.10.2018թ շին. թույլ N 29 23.11.2018թ մասով խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122-րդ կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122-րդ կետի պահանջները |
| 6.09. 3-օրյա ժամկետում շինարարության (քանդման) թույլտվություն տրամադրելու վերաբերյալ հիմնավորված է ՀՀ համապատասխան մարզպետը | Թերի է պահպանված | շին. թույլ N 2 12.02.2018թ շին. թույլ N 14 31.07.2018թ շին. թույլ N 27,23.10.2018թ շին. թույլ N 29 23.11.2018թ մասով խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122-րդ կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122-րդ կետի պահանջները |
| 7.01. ավարտված շինարարության շահագործման ընդունումը փաստագրվում է շահագործման ակտի ձևակերպմամբ, կառուցապատողի կողմից ներկայացված դիմումի և դիմումին կից փաստաթղթերի հիման վրա: Դիմումին կցվող փաստաթղթերն են՝<br>1) ընդունող հանձնաժողովի կողմից շահագործման ակտը կամ երկկողմանի շահագործման ակտը.<br>2) երկկողմանի շահագործման ակտի դեպքում՝ տարածքային բաժնի, շահագրգիռ պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եզրակացությունները.<br>3) կատարողական փաստաթղթերի ցանկը.<br>4) շահագործման ակտի ձևակերպման համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վճարի մուծումը հավաստող անդորրագիրը: | Թերի է պահպանված | ավ. ակտ (շ.թ) N2 09.07.2018թ, ավ. ակտ (շ.թ) N3 22.08.2018թ, ավ. ակտ (շ.թ) N4 30.08.2018թ, ավ.ակտ (շ.թ) N5 05.09.2018թ, ավ. ակտ (շ.թ) N 6 05.09.2018թ, մասով խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 5-ի ձև 3-1-ի ձևաթղթի հիմքերի .2.3.-րդ կետերի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 5-ի ձև 3-1 ձևաթղթի .2.3-րդ կետերի պահանջները |
| 7.17. Շինարարության շահագործման ակտը ձևակերպելուց հետո 3-օրյա ժամկետում ծանուցվում է համապատասխան մարզպետը (կցվում է շահագործման ակտի պատճենը) | Թերի է պահպանված | ավ. ակտ (շ.թ) N1 06.02.2018թ, ավ. ակտ (շ.թ) N3 22.08.2018թ, ավ. ակտ (շ.թ) N4 30.08.2018թ, ավ.ակտ (շ.թ) N5 05.09.2018թ մասով խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 169-րդ կետի պահանջը | Ապահովել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 169-րդ կետի պահանջը |
| 7.18. շինարարության շահագործման ակտը ձևակերպելուց հետո 3-օրյա ժամկետում ծանուցվում է տեսչության տարածքային բաժինը (կցվում է շահագործման ակտի պատճենը) | Թերի է պահպանված | ավ. ակտ (շ.թ) N1 06.02.2018թ, ավ. ակտ (շ.թ) N3 22.08.2018թ, ավ. ակտ (շ.թ) N4 30.08.2018թ, ավ.ակտ (շ.թ) N5 05.09.2018թ մասով խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 169-րդ կետի պահանջը | Ապահովել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 169-րդ կետի պահանջը |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 10.05. Յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծերի մշակում և հաստատում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 10) | Թերի է պահպանված | Առկա է ոչ բոլոր գերեզմանատների համար: | Ապահովել համապատասխան փաստաթղթերի կազմումը: |
| 10.06. Գերեզմանատներում տրամադրվող գերեզմանների չափերի պահպանում (ՀՀ կառավարության 2006 թվականի Նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 11, 12) | Թերի է պահպանված | Առկա են սահմանված չափերի խախտումներ | Այսուհետ ապահովել սահմանված չափերի պահպանումը: |
| 10.07. Գերեզմանատների մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների տեղադրումը և գերեզմանատների տարածքի մաքրության պահպանումն ու պահպանության կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 15, 16) | Թերի է պահպանված | Ապահովված է գերեզմանատների մաքրությունը, բացակայում են հատակագծերը: | Միջոցներ ձեռնարկել համապատասխան հատակագծերը ձեռք բերելու ուղղությամբ: |
| **Առևտուր և ծառայություններ** | | | |
| «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի և ծառայությունների ոլորտում այդ օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը, բացառությամբ նույն օրենքով սահմանված առանձին դեպքերի, իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները: Հսկողությունն իրականացվում է օրենքի 17'-րդ հոդվածով սահմանված կարգով: | Թերի է պահպանված | Թերի է պահպանված առևտրի և ծառայությունների ոլորտի 01-07, 10, 11, 13, 14-24, 26, 27, 29-34 դրույթների մասով: Համաձայն համայնքապետարանի համապատասխան պատասխանատուների հաղորդման՝ նշված դրույթներով սահմանված հսկողությունն իրականացվում է, սակայն կոնկրետ օբյեկտներում կատարված ստուգումների կամ հսկողության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները կամ տեղեկանքները ստուգվող ժամանակահատվածի համար բացակայում են: Անհրաժեշտ է հսկողությունն իրականացնել «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 17'-րդ հոդվածով սահմանված կարգի լիարժեք պահպանմամբ: | Առաջարկվում է օրենսդրությամբ սահմանված կարգով այսուհետ կազմել կատարված հսկողությունը փաստող համապատասխան փաստաթղթերը՝ անկախ խախտումներ լինելու կամ չլինելու փաստից: |
| **Արտակարգ իրավիճակներ** | | | |
| 1.02. Տարահանված բնակչության կենսաապահովում. Բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլանի առկայություն: | Թերի է պահպանված | Տարահանված բնակչության կենսաապահովման միջոցառումները ներկայացված են տարահանման պլանում, սակայն անհրաժեշտ է ունենալ բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլան: | Առաջարկվում է մշակել, համաձայնեցնել և հաստատել պլանը |

| Նախատված ղրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 1.03. Բնակչության պատսպարման իրականացում. Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարման համար նախապես մշակված և հաստատված ամրագրման պլանի, պաշտպանական կառույցներով չապահովված բնակչությանը պատսպարելու նպատակով՝ արագագույն թաքստոցների կառուցման համար համայնքի ղեկավարի կողմից հաստատված պլանի առկայություն: | Պահպանված չէ | Բնակչության պատսպարման հաշվարկները ներառված են համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանում, սակայն անհրաժեշտ է ունենալ պաշտպանական կառույցներով չապահովված բնակչությանը պատսպարելու նպատակով՝ պարզագույն թաքստոցների կառուցման համար համայնքի ղեկավարի կողմից հաստատված պլան: | Առաջարկվում է մշակել, հաստատել պլանը, պաշտպանական կառույցների մուտքի վրա կախել ցուցատախտակներ, իսկ դեպի պաշտպանական կառույցներ տանող շարժական երթուղիների վրա ցուցանշաններ: Պլանավորել պաշտպանական կառույցներին |
| 1.04. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշկված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան տրակյան կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի առկայություն: | Պահպանված չէ | Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության և տարահանման միջոցառումները ներառված են տարահանման և ԱՌԿ պլանում (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N919 որոշման պահանջներ) | Մշակել, համաձայնեցնել և հաստատել պլանը |
| 1.4. Ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտերի ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն: | Թերի է պահպանված | Տուժած բնակչության համակողմանի ապահովման միջոցառումները ներառված են տարահանման պլանում, սակայն համապատասխան հայտեր չեն ներկայացված (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N919 որոշման պահանջներ) | Ներկայացնել համապատասխան հայտերը |
| 4.1. Համայնքների ղեկավարների կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն: | Պահպանված չէ | Հայտերը չեն ներկայացված (ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N1351-Ն որոշում) | Հայտ ներկայացնել համայնքի սեյսմիկ ռիսկի քարտեզ մշակելու համար |
| 4.2. Համայնքների զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ներառում: | Պահպանված չէ | ռիսկի նվազեցման միջոցառումներ չեն ներառված (ՀՀ կառավարության 2012 | Համայնքի զարգացման ծրագրում ներառել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները |
| Առողջապահություն | | | |
| 01. Առկա են աղքահանության սխեմաները, համաձայն որոնց իրականացվում են ոչ վնասակար թափոնների հավաքումը՝ սպառման թափոնների փոխադրումը (աղբահանությունը): | Թերի է պահպանված | Սխեմաները հաստատված չեն համայնքի ղեկավարի կողմից | Առաջարկվում է սխեմաները հաստատել |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 2.02. Առկա են կոնտեյներներ, որոնք 1) ունեն կափարիչներ, 2) պարունակում են աղբահանության ընկերության հասցեն կամ անվանումը կամ ծածկագիրը, 3) ունեն մաքրման և ախտահանման ենթակա հարթ մակերեսներ: | Թերի է պահպանված | Աղբամանների վրա չեն նշված աղբահանություն իրականացնողի հեռախոսահամարները | Առաջարկվում նշել հեռախոսահամարները |
| 2.20. Աղբատար փոխադրամիջոցների հետ առկա են. 1) փակ թափքեր, 2) աղբաջրերը հավաքող համակարգ, 3) կողքից կամ հետնամասում կոնտեյներները բեռնող հիդրավլիկ սարք, 4) կոնտեյներները լվանալու համակարգ: | Թերի է պահպանված | Աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված փակ թափքերով և հարմարեցված բաց թափքերով մեքենաներով: | Առաջարկվում է վերացնել թերությունները |
| 3.02. Ջրամատակարարման բաշխիչ ցանցերում առկա է խմելու ջրի արտադրական հսկողության իրականացում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված (մանրէաբանական զգայորոշական ցուցանիշներով սահմանված հաճախականությամբ): | Թերի է պահպանված | Պահպանված է միայն կենտրոնացված ջրամատակարարում իրականացվող բնակավայրերում | Առաջարկվում է վերացնել թերությունները |
| 3.03. Մինչև ջուրը բաշխիչ ցանց մտնելը առկա է խմելու ջրի մնացորդային քլորի պարունակության հսկողության իրականացում: | Թերի է պահպանված | Պահպանված է միայն կենտրոնացված ջրամատակարարում իրականացվող բնակավայրերում | Առաջարկվում է վերացնել թերությունները |

Վերոնշյալ բոլոր դրույթների մասով հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով առաջարկվում է 20 աշխատանքային օրվա ընթացքում սկսել միջոցներ ձեռնարկել այդ խախտումները վերացնելու ուղղությամբ:

Սույն հավելվածը կազմված է 2 օրինակից:

ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար

Ս.Ավետիսյան

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավար

Ա. Սարգսյան